

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
5 ՄԱՅԻՍԻ 2013 Թ.

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

Տեղամասային ընտրական  
հանձնաժողովի անդամների համար





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# **ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5 ՄԱՅԻՍԻ 2013Թ.**

## **ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց**

**ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

ԵՐԵՎԱՆ 2013 թ.

Սույն ձեռնարկը հրապարակվել և կազմվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա:

Սույն ձեռնարկը կազմելիս հաշվի են առնվել համապետական ընտրությունների վերաբերյալ դիտորդական առաքելություն իրականացրած միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցներով ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև դատական ակտերով ներկայացված իրավական դիրքորոշումները:



|         |
|---------|
| 1.....1 |
| 2.....2 |
| 3.....3 |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                                         |  |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|
| ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ.....5                                                                           |  |
| Տեղամասային ընտրական հանձնաժողովներ կազմավորելու հիմունքները և կարգը..... 5                                                             |  |
| ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....6                                                                               |  |
| ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ.....6                                                                                    |  |
| ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ<br>ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ .....7                                                                  |  |
| Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի իրավունքները,<br>պարտականությունները և գործունեության երաշխիքները..... 7                       |  |
| Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների<br>վաղաժամկետ դադարման դեպքերը..... 8                                        |  |
| Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի<br>և քարտուղարի պաշտոնանկության կարգը..... 9                                                 |  |
| ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՆ<br>ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿՈՒՄ<br>ՆԵՐԿԱ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ.....9 |  |
| ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ..... 12                                                                                |  |
| Քվեարկության օրը ընտրական տեղամասում կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակ.....12                                                         |  |
| ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ<br>ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՍՏԱՅՈՒՄԸ<br>ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ ..... 13     |  |
| ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ<br>ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ ..... 14                                                 |  |
| Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքների բաշխումը ...14                                                              |  |
| Վիճակահանություն՝ քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների էջերը ստորագրող<br>հանձնաժողովի երեք անդամներին որոշելու համար .....15         |  |
| Քվեաթերթիկների և ընտրողների ցուցակների էջերի ստորագրումը.....15                                                                         |  |
| ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ..... 17                                                                                                |  |
| ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ<br>ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ..... 19                                                        |  |
| ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ..... 22                                                                                                             |  |
| Հանձնաժողովի նախագահը..... 22                                                                                                           |  |
| Տեղամասային կենտրոն մուտք գործելը ..... 23                                                                                              |  |

|                                                                                                                                         |    |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ .....                                                                                                                | 24 |
| Ընտրողների գրանցումը.....                                                                                                               | 24 |
| Քվեաթերթիկ և քվեարկության ծրար ստանալը.....                                                                                             | 25 |
| Քվեարկությունը .....                                                                                                                    | 25 |
| Քվեարկության ծրարի կնքում և քվեատուփ.....                                                                                               | 26 |
| Տեսողության պատճառով քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու<br>հնարավորություն չունեցող ընտրողների համար քվեարկությունը .....                | 27 |
| Շարժասայլակով տեղաշարժվող ընտրողների քվեարկությունը .....                                                                               | 28 |
| ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄԸ .....                                                                                                      | 29 |
| Քվեարկության արդյունքների ամփոփումը.....                                                                                                | 29 |
| ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱՐՆԵՐԻ<br>ԵՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ .....                                                                          | 31 |
| ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ<br>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....                                                                          | 34 |
| ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԵԿԱՆԳԱՄՅԱ<br>ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՐԿԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ .....                                                             | 35 |
| ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ<br>ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ .....                                                         | 36 |
| Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները տեղամասային<br>ընտրական հանձնաժողովների արձանագրությունները ստանալուց հետո..... | 36 |
| ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ,<br>ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼԸ .....                              | 37 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1.....                                                                                                                         | 39 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 2 .....                                                                                                                        | 42 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 3 .....                                                                                                                        | 45 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 4 .....                                                                                                                        | 47 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 5 .....                                                                                                                        | 49 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 6 .....                                                                                                                        | 51 |

Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետությունում կազմավորվում է ընտրական հանձնաժողովների **եռաստիճան համակարգ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տեղամասային ընտրական հանձնաժողով**:



**1**

## **ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

Տեղամասային ընտրական հանձնաժողովն ունի առնվազն 7 անդամ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովում՝

**մեկական անդամ** նշանակում են Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքը՝



Հայաստանի Հանրապետական կուսակցությունը,



«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը,



«Հայ Ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքը,



«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը,



«Օրինաց Երկիր» կուսակցությունը,



«Ժառանգություն» կուսակցությունը:

**երկու անդամ** նշանակում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը նշանակվում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ ԿԸՀ որոշմամբ իրականացված բաշխմանը համապատասխան, հանձնաժողովում կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նշանակած անդամներից՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

## **ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացիները, որոնք կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անցել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել որակավորման վկայականներ:



**Քաղաքացին կարող է ընդգրկվել միայն մեկ ընտրական հանձնաժողովի կազմում:**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով (տես՝ սույն ձեռնարկի հավելված 1) նախատեսված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք:

## Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել՝

- × ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները.
- × ՀՀ սահմանադրական դատարանի անդամները.
- × Դատավորները.
- × Դատախազները.
- × Նախարարները և նրանց տեղակալները.
- × Մարզպետները և նրանց տեղակալները.
- × Համայնքների ղեկավարներն ու ավագանու անդամները.
- × Ոստիկանությունում և ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները.
- × Զինծառայողները.
- × Վստահված անձինք, լիազոր ներկայացուցիչները, դիտորդները, թեկնածուները:



# 2

## ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝


- ◆ կազմակերպում է քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքները ընտրական տեղամասում.
- ◆ կազմում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն, արձանագրության օրինակը փակցնում է տեղամասային կենտրոնում.
- ◆ հանձնաժողովի կնիքը, դրոշմակնիքը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության 2 օրինակները, ընտրական փաստաթղթերի պարկը և քվեատուփը ներկայացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով.
- ◆ իրականացնում է ընտրական օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները դադարում են քվեարկության օրվանից 5 օր հետո, եթե ընտրության արդյունքները չեն բողոքարկվել: Ընտրության արդյունքները բողոքարկվելու և վերաքվեարկություն անցկացվելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները դադարում են վերաքվեարկության օրվանից 5 օր հետո:



# 3

## ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍԵԸ



Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է հանձնաժողովի կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12:00-ին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հանձնաժողովի իր մասնակցած առաջին նիստում հրապարակայնորեն ընթերցում է պարտավորության տեքստ՝ «Ընտրական հանձնաժողովի

անդամի պարտականությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու մասին» ու ստորագրում այն:



4

## ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ հանձնաժողովի քարտուղարը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով կրում են իրենց վկայականը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստին հանձնաժողովի անդամների մասնակցությունը նշվում է հանձնաժողովի գրանցամատյանում, որտեղ յուրաքանչյուրը ստորագրում է իր ազգանվան դիմաց:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ հանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոնանկ անելու վերաբերյալ որոշման, որն ընդունվում է հանձնաժողովի անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների որոշումների, արձանագրությունների, գրանցամատյանների գրառումների պատճենները և քաղվածքները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը և կնքվում է հանձնաժողովի կնիքով:

## ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

### ***Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝***

- ◆ նախապես ծանոթանալու հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին.
- ◆ ելույթ ունենալու հանձնաժողովի նիստում.
- ◆ ներկայացնելու առաջարկություններ և պահանջելու, որ այդ առթիվ անցկացվի քվեարկություն.
- ◆ նիստի մասնակիցներին տալու հարցեր, ստանալու պատասխաններ.
- ◆ ծանոթանալու ստացված դիմումներին, բողոքներին, գրություններին և մյուս փաստաթղթերին.
- ◆ հայտնելու ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման վերաբերյալ իր կարծիքը:



## Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

- ◆ իր մասնակցած առաջին նիստում ստորագրել «Ընտրական հանձնաժողովների անդամի պարտականությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու մասին» պարտավորության տեքստը.
- ◆ կատարել հանձնաժողովի նախագահի՝ իր իրավասության սահմաններում տված հանձնարարությունները.
- ◆ մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին և կատարել իր լիազորությունները.
- ◆ մասնակցել հանձնաժողովի նիստերին և քվեարկությանը:



### Ուշադրություն

*Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պարտավոր են մասնակցել քվեարկությանը, քվեարկում են անձամբ՝ կողմ կամ դեմ:*

*Հանձնաժողովի անդամները իրավունք չունեն չմասնակցելու քվեարկությանը կամ ձեռնպահ քվեարկել:*

## Ընտրական հանձնաժողովի անդամներին արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին ընտրությունների ժամանակահատվածում վարձատրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի, հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի անդամները՝ նվազագույն աշխատավարձի չափով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները վարձատրվում են ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, հանձնաժողովի քարտուղարին կամ անդամին վարձատրություն չի տրվում, եթե նա չի ստորագրել քվեարկության արդյունքների արձանագրությունը կամ եթե նրա լիազորությունները վաղաժամկետ դադարել են:

## **ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

- ◆ եթե չունի հանձնաժողովում նշանակվելու իրավունք.
- ◆ եթե հրաժարվում է ստորագրել պարտավորության տեքստը.
- ◆ եթե դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով կամ նրա նկատմամբ որպես պատիժ կիրառվել է կալանք կամ ազատազրկում.
- ◆ եթե ներկայացրել է հանձնաժողովի անդամի պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում.
- ◆ եթե զորակոչվել է.
- ◆ եթե ՏՀՀ նախագահը կամ քարտուղարը ներկայացրել է այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի և Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի քարտուղարի պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմումը դիմումատուն ներկայացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին և այդ մասին անհապաղ տեղեկացնում իրեն նշանակողին:


Դիմումը պետք է պարունակի **դիմումարտուի ազգանունը, անունը, հայրանունը, տեղամասային ընտրական հանձնաժողովի համարը, դիմում ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը և ժամը:**

#### ❗ Ուշադրություն

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում կարող է ներկայացնել քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ մինչև ժամը 18:00-ն՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:

### ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը հանձնաժողովի անդամների ծայների ընդհանուր թվի առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ կարող են պաշտոնանկ արվել միայն, եթե քվեարկության նախորդ օրը կամ քվեարկության օրը ցուցաբերում են **ակնհայտ անգործություն**, որի հետևանքով կարող է վտանգվել քվեարկության նախապատրաստումը կամ քվեարկության բնականոն ընթացքը կամ քվեարկության արդյունքների ամփոփումը:



#### ❗ Ուշադրություն


Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին (քարտուղարին) պաշտոնանկ անելու մասին որոշում կայացվելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովին անհապաղ տեղեկացնում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:

Այդ դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ կամ քարտուղար նշանակում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի այլ անդամներից:



5


### ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՆ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿՈՒՄ ՆԵՐԿԱ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ



Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձինք **վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով կրում են** ներկա լինելու իրավունքը հավաստող վկայական:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում տեղամասային կենտրոնում և քվեարկության արդյունքները ամփոփելու ընթացքում քվեարկության սենյակում կարող են ներկա լինել՝

- ◆ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, որոնք պետք է ունենան իրենց լրատվամիջոցի կողմից տրված վկայական: Միաժամանակ կարող են ներկա լինել յուրաքանչյուր լրատվամիջոցը ներկայացնող ոչ ավելի քան 1 լրագրող և 1 լուսանկարիչ կամ տեսաձայնագրման 1 օպերատոր,
- ◆ միջազգային դիտորդները, որոնք պետք է ունենան ԿԸՀ-ի կողմից տրված վկայական: Միաժամանակ կարող են ներկա գտնվել յուրաքանչյուր հավատարմագրված կազմակերպությունից մինչև 2 միջազգային դիտորդ և 1 թարգմանիչ,
- ◆ տեղական դիտորդները, որոնք միաժամանակ պետք է ունենան երկու վկայական՝ դիտորդի հավատարմագրման վկայական և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական կամ ստուգարքի արդյունքով ստացած դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական,
- ◆ կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամները՝ համապատասխան հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ,
- ◆ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի մեկական վստահված անձ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Վստահված անձինք պետք է ունենան ԿԸՀ-ի կողմից տրամադրված վկայական:
- ◆ Երևանի ավագանու անդամի թեկնածուն՝ միայն տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին:



### ***Վստահված անձինք***

Վստահված անձինք ներկայացնում են թեկնածուների շահերը:

### ***Վստահված անձն իրավունք ունի՝***

- ◆ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու ընտրական հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում ներկա լինելու քվեարկության սենյակում.
- ◆ անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, տեղամասային ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից.
- ◆ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում բողոքարկելու հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը.
- ◆ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին.

- ◆ չմիջամտելով հանձնաժողովի անդամի աշխատանքներին՝ ֆիզիկապես ներկա լինելու հանձնաժողովի՝ ընտրողների գրանցում իրականացնող, քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող անդամների, քվեարկության ծրարները կնքող և քվեատուփը հսկող անդամի կողքին և հետևելու նրանց աշխատանքներին.
- ◆ քվեարկության օրը հետևելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և դրանց վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնելու դիտարկումներ և առաջարկություններ.
- ◆ քվեարկության արդյունքներն ամփոփելիս ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին, ներկա լինելու քվեաթերթիկների հաշվարկմանը և քվեարկության արդյունքների ամփոփմանը.
- ◆ իրականացնելու ընտրական օրենսգրքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

### **Դիտորդը, ՁԼՄ ներկայացուցիչն իրավունք ունեն՝**

- ◆ ներկա լինելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում,
- ◆ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին.
- ◆ անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից.
- ◆ ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար.
- ◆ օգտվելու ընտրական օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներից:

Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը իրավունք չունի միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին:

Վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են լուսանկարահանել, տեսանկարահանել ընտրական հանձնաժողովների նիստերը, ինչպես նաև քվեարկության ընթացքը՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը:



**Վստահված անձանց, դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչին, վստահված անձին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի:**



## 6

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

Քվեարկության օրվանից 2 օր առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը լիազոր մարմնից ստանում է ընտրական տեղամասի ընտրողների հիմնական ցուցակը երկու օրինակից՝ 1-ին օրինակը կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար: Ցուցակը էջակալված, ցուցակի յուրաքանչյուր էջ ստորագրված և կնքված պետք է լինի լիազոր մարմնի կողմից: **Քվեարկության օրվանից 2 օր առաջ** տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ցուցակի 2-րդ օրինակը փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում՝ նախկինում փակցված ցուցակների փոխարեն: Ցուցակները փակցված են մնում տեղամասային կենտրոնում մինչև տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների դադարման օրը:



### Ուշադրություն

Ընտրողների ցուցակի օրինակը քվեարկության օրվանից 2 օր առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը փակցնում է տեղամասային կենտրոնում բոլորի համար տեսանելի տեղում՝ նախկինում փակցված ցուցակների փոխարեն:

## ՔԿԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԿԱԶՄՎՈՂ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿ

Տեղամասային ընտրական հանձնաժողովն ընտրողների հիմնական ցուցակի հետ միաժամանակ ստանում է քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակի ձևաթղթեր:

### Քվեարկության օրն այս ցուցակում ընդգրկվում են՝

- ◆ տվյալ ընտրական տեղամասի տարածքում հաշվառված, սակայն ընտրողների ցուցակում չընդգրկված ընտրողները՝ ընտրողների ցուցակում ընդգրկված չլինելու մասին լիազոր մարմնի տեղեկանքի հիման վրա.
- ◆ քվեարկության օրը դատարանի վճիռ ներկայացրած ընտրողները:



### Ուշադրություն

Տվյալ ընտրական տեղամասի տարածքում հաշվառված, սակայն ընտրողների ցուցակում չընդգրկված ընտրողները լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու համար դիմում են լիազոր մարմնի տարածքային ստորաբաժանմանը:



**7**

## ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ



Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը (որին կարող են ուղեկցել հանձնաժողովի անդամները, վստահված անձինք, դիտորդները, ՁԼՄ ներկայացուցիչները) քվեարկության նախորդ օրը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ստանում է հետևյալ ընտրական փաստաթղթերը և պարագաները՝

- ☐ քվեաթերթիկները (ընտրական տեղամասում ընտրողների թվի մինչև 3 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան ընտրողների թվից 2 քվեաթերթիկ ավելին)։
- ☐ քվեարկության ծրարները (քվեաթերթիկների թվին համապատասխան)։
- ☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի՝ քվեարկության արդյունքների արձանագրության ձևաթղթերը (առնվազն 4 օրինակ)։
- ☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի՝ քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածքի ձևաթղթեր։
- ☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը փաթեթավորված անթափանց փաթեթում, փակված, ԿԸՀ-ի և ԸԸՀ-ի կողմից կնքված։
- ☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները։
- ☐ ՏԸՀ-ի կնիքի և ՏԸՀ անդամների անհատական կնիքների օգտագործման համար թանաք և բարձիկ։
- ☐ ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելու համար նախատեսված դրոշմակնիքը։
- ☐ ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելու համար նախատեսված հատուկ թանաք և բարձիկ։
- ☐ քվեախցիկները (յուրաքանչյուր 750 ընտրողի համար առնվազն մեկ քվեախցիկ հաշվարկով)։
- ☐ քվեատուփ իր կապիչներով։
- ☐ ծրարներ ընտրական փաստաթղթերը փաթեթավորելու համար։
- ☐ տեսակավորված և փաթեթավորված ընտրական փաստաթղթերը հավաքելու համար մեկանգամյա օգտագործման պարկ։
- ☐ քվեաթերթիկին համապատասխանող ստվարաթղթե կաղապար՝ տեսողության պատճառով քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողների համար։
- ☐ քվեաթերթիկի նմուշը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար։
- ☐ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներով պաստառ՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար։
- ☐ ուսուցողական նշանակության պաստառներ՝ քվեարկության սենյակում փակցնելու համար։
- ☐ գրենական և այլ անհրաժեշտ պարագաներ։

Ընտրական փաստաթղթերն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ստացվում են հանձնողի ու ընդունողի կողմից ստորագրելու և ստացական տալու միջոցով:

**❗ Ուշադրություն**

Մինչև քվեարկության օրը փաթեթավորված կնիքի փաթեթը բացելն արգելվում է և հանգեցնում քրեական պատասխանատվության:

**❗ Ուշադրություն**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգում է, որ հանձնաժողովին հաղկացված քվեարկության արդյունքների արձանագրությունների բոլոր օրինակներում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից լրացված լինեն տեղամասային ընտրական հանձնաժողովին հաղկացված քվեաթերթիկների թիվը և ելունդների համարները:

**Հանձնաժողովին հաղկացված քվեաթերթիկների թիվը**

(լրացվում է ընտրատարածքային  
ընտրական հանձնաժողովի կողմից)

(Ա) \_\_\_\_\_

**Ելունդների համարները**


(լրացվում է ընտրատարածքային  
ընտրական հանձնաժողովի կողմից)

N \_\_\_\_\_




**8**

**ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ**



Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ավարտել ստորև նշված բոլոր գործողությունները մինչև քվեարկության նախորդ օրը՝ ժամը՝ 24:00-ն:

**ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ  
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿՆԻՔՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ**



Տեղամասային ընտրական հանձնաժողովն իր նիստում վիճակահանությանը բաշխում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքները: Այդ նպատակով՝

1. տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը անհատական կնիքները տեղավորում է վիճակահանության արկղի մեջ,
2. հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, ազգանունների, իսկ ազգանունները համընկնելու դեպքում՝ անունների (հայրանունների) այբբենական հերթականությամբ վիճակահանության արկղից հանում են մեկական անհատական կնիք,
3. հանձնաժողովի անդամները տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի համապատասխան մասում իրենց ազգանվան դիմաց դնում են անհատական կնիքների նմուշները:

## **Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը կարող է ունենալ սեփական դրոշմ, սակայն այն ունենալը պարտադիր չէ:**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը սեփական դրոշմը, իր ստորագրության փոխարեն, կարող է օգտագործել **միայն** հետևյալ դեպքերում.

- ✓ դրոշմել քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների բոլոր էջերը (ԸՕ 59-րդ հոդվածի 7-րդ մաս),
- ✓ դրոշմել հաշվարկված և տեսակավորված քվեարկության ծրարների ու քվեաթերթիկների փաթեթները (ԸՕ 67-րդ հոդվածի 8-րդ մաս),
- ✓ դրոշմել ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը (ԸՕ 71-րդ հոդվածի 7-րդ մաս),
- ✓ **ՀՀ ընտրական օրենսգրքի 59-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգի համաձայն գրանցամատյանում դրվում է նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի ստորագրության և սեփական դրոշմի նմուշները:**

## **ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ ԵՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԷՋԵՐԸ ՍՏՈՐԱԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՐԵՔ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ**


Տեղամասային ընտրական հանձնաժողովին իր նիստում վիճակահանությամբ որոշում է քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների էջերը ստորագրող հանձնաժողովի 3 անդամներին: Վիճակահանությամբ որոշված այդ ՏԸՀ 3 անդամները **պարտավոր են** 2013 թվականի մայիսի 4-ին՝ **մինչև ժամը 24:00-ն**, ստորագրել կամ սեփական դրոշմով դրոշմել կամ անհատական կնիքով կնքել բոլոր քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների բոլոր էջերը:

**Վիճակահանությանը մասնակցում են տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները՝ այդ թվում հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:**

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը նախապատրաստում է նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվին հավասար թվով իրարից չտարբերվող թերթիկներ,
2. երեքի վրա նշում է «Երևանի ավագանու ընտրություն» բառերը,
3. բոլոր թերթիկները քառապատիկ ծալում է՝ այնպես, որ դրանք միմյանցից չտարբերվեն և գցում վիճակահանության արկղի մեջ,
4. ՏԸՀ-ի անդամները, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, ազգանունների, իսկ ազգանունները համընկնելու դեպքում՝ անունների (հայրանունների) այբբենական հերթականությամբ վիճակահանության արկղից հանում են մեկական թերթիկ,
5. Վիճակահանության արդյունքներն արձանագրվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:


## **ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԵՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԷՋԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ**

- 1 տեղամասային ընտրական հանձնաժողովը հաշվում է ստացված քվեաթերթիկները և հերթական համարներով հարյուրական քվեաթերթիկ, դրանց վրա առկա անցքերի մասով՝ կապում,
- 2 հանձնաժողովը հաշվում է նաև քվեարկության ծրարները և առանձնացնելով հարյուրական ծրար՝ կապում,





**3** քվեաթերթիկները կապելուց հետո վիճակահանությամբ որոշված հանձնաժողովի 3 անդամները ստորագրում կամ սեփական դրոշմով դրոշմում կամ անհատական կնիքով կնքում են Երևանի ավագանու ընտրության քվեաթերթիկները:



- ✓ *Ստորագրությունը, դրոշմը կամ անհատական կնիքը դրվում է քվեաթերթիկի հակառակ կողմում՝ հալման գծից ներքև, այնպես, որ քվեաթերթիկները մարելու ժամանակ ստորագրությունների ամբողջականությունը պահպանվի:*
- ✓ *Վիճակահանությամբ որոշված հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ինքն է որոշում ստորագրելու իր համար նախընտրելի տարբերակը: Եթե դնելու է ստորագրություն, ապա նա տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի սահմանված տեղում դնում է իր ստորագրության նմուշը, սեփական դրոշմով դրոշմելու դեպքում՝ դրոշմի, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքով կնքելու դեպքում՝ այդ կնիքի նմուշը:*



#### **Ուշադրություն**

*Քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների էջերը ստորագրելու ընթացքում հանձնաժողովի անդամը ստորագրման իր ընտրած տարբերակը փոփոխել չի կարող:*

Ստորագրելու ժամանակ հանձնաժողովը ստուգում է քվեաթերթիկների համարների հերթականությունը: Տպագրական խոտանի պատճառով սահմանված նմուշից տարբերվող կամ կրկնվող համարներով քվեաթերթիկը կապից հանվում է, քվեաթերթիկի վրա նշվում է «**խոտան**» բառը՝ ինչի վերաբերյալ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում է գրառում: Տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրառվում են նաև տպագրական խոտանի պատճառով քվեաթերթիկների համարների հերթականության խախտման դեպքերը:

**Տպագրական խոտանի պատճառով սահմանված նմուշից տարբերվող կամ կրկնվող համարով քվեաթերթիկները մարվում են: Մարված քվեաթերթիկները պահվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի չիրկիզվող պահարանում և քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվարկվում մնացած մարված քվեաթերթիկների հետ:**

**Վիճակահանությամբ որոշված հանձնաժողովի նույն 3 անդամները ստորագրում կամ սեփական դրոշմով դրոշմում կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքով կնքում են տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված ընտրողների ցուցակների բոլոր էջերը:**

- ✓ **Ստորագրությունը, դրոշմը կամ անհատական կնիքը դրվում է ընտրողների ցուցակների յուրաքանչյուր էջի հակառակ կողմում:**

Քվեաթերթիկներն ու ընտրողների ցուցակների էջերը ստորագրելուց հետո փաստաթղթերի պահպանման համար նախատեսված չիրկիզվող պահարանում տեղադրվում են՝

- ✓ քվեաթերթիկների կապերը,
- ✓ ընտրողների հիմնական ցուցակները,
- ✓ քվեարկության ծրարների փաթեթները,
- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի փաթեթավորված կնիքը,
- ✓ ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելու համար նախատեսված դրոշմակնիքը,
- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները:

Պահարանը փակվում և փակման մասը թղթով սոսնձվում է: Սոսնձված թղթի վրա ստորագրում կամ սեփական դրոշմով դրոշմում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը. հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս կարող են ստորագրել կամ սեփական դրոշմով դրոշմել սոսնձված թղթի վրա:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պահարանը հանձնում է պահպանման ոստիկանության ծառայողներին, որի մասին գրանցամատյանում կազմվում է արձանագրություն:



**9**

## **ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ**



### **Ուշադրություն**



**Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի քվեարկության նախորդ օրը՝ 4 մայիսի 2013 թ. մինչև ժամը 24:00-ն:**

**Քվեարկության խցիկները տեղադրվում են միմյանցից առնվազն 1 մետր հեռավորությամբ և այն դիրքով, որ ընտրողը քվեարկելիս լինի հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը:**


Ընտրողների գրանցման, ընտրողներին քվեաթերթիկներ ու քվեարկության ծրարներ հատկացնելու և քվեարկության ծրարները կնքելու համար տեղամասային կենտրոններում տեղադրվում են աշխատանքային սեղաններ:

Ընտրողների գրանցման և ընտրողներին քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող անդամների աշխատատեղերից յուրաքանչյուրի միջև նախատեսվում է առնվազն մեկ աշխատատեղ վստահված անձի համար: Եթե ընտրողների գրանցում իրականացնող և ընտրողներին քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող երկու անդամներն էլ նշանակված են խորհրդարանական ընդդիմություն ներկայացնող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) կողմից, ապա վստահված անձի համար նախատեսված աշխատատեղը զբաղեցնելու նախապատվության իրավունք ունի խորհրդարանական մեծամասնություն ներկայացնող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վստահված անձը, ընդ որում առավել մեծ խմբակցություն ունեցող կուսակցության վստահված անձն ունի առաջնություն: Հակառակ դեպքում այդ տեղը զբաղեցնելու նախապատվության իրավունք ունի խորհրդարանական ընդդիմություն ներկայացնող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վստահված անձը, ընդ որում առավել մեծ խմբակցություն ունեցող կուսակցության վստահված անձն ունի առաջնություն, եթե այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նշանակված հանձնաժողովի անդամը գործառույթ չի իրականացնում:

Քվեատուփը, հանձնաժողովի անդամների աշխատասեղանները տեղադրվում են ընտրական տեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց համար տեսանելի տեղում:

Քվեարկության սենյակում կամ դրա մուտքի մոտ փակցվում են քվեաթերթիկի նմուշը, Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներով պաստառը:


# Քվեարկության սենյակի գծագիրը



**10**


## ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները քվեարկության օրը՝ 5 մայիսի 2013թ., պետք է ներկայանան տեղամասային կենտրոն ոչ ուշ, քան **ժամը 06:45-ին**



Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգելով պահարանին սուսնձված թղթի ամբողջականությունը ոստիկանության ծառայողներից ընդունում է չհրկիզվող պահարանը, որի մասին գրանցամատյանում կազմվում է արձանագրություն:

**Այդ պահին չհրկիզվող պահարանը դեռ չի բացվում:**



Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը սկսում է **քվեարկության օրը՝ ժամը 7:00-ին**:

**Նիստի ժամը տեղափոխվել չի կարող:**



### Ուշադրություն

- Եթե նիստին ներկայացել են վստահված անձինք, դիտորդներ, ՋԼՄ ներկայացուցիչներ, վերադաս (կենտրոնական և (կամ) ընտրատարածքային) ընտրական հանձնաժողովի անդամներ, ստուգվում է նրանց համապատասխան վկայականների առկայությունը վերնազգեստի վրա:

**Նիստին ներկա վստահված անձանց, դիտորդների, ՋԼՄ-ների ներկայացուցիչների տվյալները լրացվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի երկրորդ մասում՝ յուրաքանչյուրի համար նախատեսված տեղում:**

Քվեարկության օրը՝ ժամը 7:00-ի նիստում հանձնաժողովը վիճակահանությամբ որոշում է.

1. ընտրողների գրանցումն իրականացնող անդամներին՝ մինչև 1 000 ընտրողի հաշվարկով առնվազն մեկ անդամ.
2. քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող անդամներին՝ մինչև 1 000 ընտրողի հաշվարկով առնվազն մեկ անդամ.
3. քվեարկության ծրարների կնքման և քվեատուփի համար պատասխանատու առնվազն մեկ անդամի.
4. տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ գործառույթների հերթափոխը:

**Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը գործառույթների բաշխման վիճակահանությանը չեն մասնակցում:**

**Վիճակահանությունն իրականացվում է հետևյալ կերպ՝**


Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամների թվին հավասար թվով իրարից չտարբերվող թերթիկներից.

- ◆ մեկի վրա նշում է «**ցուցակ-1**», իսկ ընտրական տեղամասում 1000-ից ավել ընտրողի դեպքում՝ հաջորդ թերթիկի վրա՝ «**ցուցակ-2**» բառերը,
- ◆ մեկի վրա նշում է «**քվեաթերթիկ-1**», իսկ ընտրական տեղամասում 1000-ից ավել ընտրողի դեպքում՝ հաջորդ թերթիկի վրա՝ «**քվեաթերթիկ-2**» բառերը:
- ◆ մեկի վրա նշում է «**քվեատուփ**» բառը:

Բոլոր թերթիկները (նաև նշում չպարունակող) ծախվում է այնպես, որ միմյանցից չտարբերվեն և տեղավորում վիճակահանության արկղի մեջ: Հանձնաժողովի անդամները, բացառությամբ հանձնաժողովի նախագահի և քարտուղարի, ազգանունների, իսկ ազգանունները համընկնելու դեպքում՝ անունների (հայրանունների) այբբենական հերթականությամբ վիճակահանության արկղից հանում են մեկական թերթիկ:

**Ամբողջ աշխատանքը բաժանվում է 6 հերթափոխի՝ յուրաքանչյուրը 2 ժամ տևողությամբ՝**

- 1) ժամը 8:00-10:00-ը,
- 2) ժամը 10:00-12:00-ը,
- 3) ժամը 12:00-14:00-ը,
- 4) ժամը 14:00-16:00-ը,
- 5) ժամը 16:00-18:00-ը,
- 6) ժամը 18:00-20:00-ը:



**6 հերթափոխից յուրաքանչյուրի համար տեղամասային ընտրական հանձնաժողովն իրականացնում է առանձին վիճակահանություն:**

Վիճակահանությունների արդյունքները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

| Հերթափոխ | Ընտրողների գրանցումն իրականացնող<br>(մինչև 1000 ընտրողի հաշվարկով առնվազն՝ մեկ, իսկ 1000-ից ավելիի դեպքում՝ երկու անդամ) |            | Քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող<br>(մինչև 1000 ընտրողի հաշվարկով առնվազն՝ մեկ, իսկ 1000-ից ավելիի դեպքում՝ երկու անդամ) |                | Քվեարկության ծրարների կնքման և քվեատուփի համար պատասխանատու<br>(առնվազն մեկ անդամի) |
|----------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|-------------------------------------------------------------------------------------|
|          | «ցուցակ 1»                                                                                                               | «ցուցակ 2» | «քվեաթերթիկ 1»                                                                                                                         | «քվեաթերթիկ 2» |                                                                                     |
| 8-10     |                                                                                                                          |            |                                                                                                                                        |                |                                                                                     |
| 10-12    |                                                                                                                          |            |                                                                                                                                        |                |                                                                                     |
| 12-14    |                                                                                                                          |            |                                                                                                                                        |                |                                                                                     |
| 14-16    |                                                                                                                          |            |                                                                                                                                        |                |                                                                                     |
| 16-18    |                                                                                                                          |            |                                                                                                                                        |                |                                                                                     |
| 18-20    |                                                                                                                          |            |                                                                                                                                        |                |                                                                                     |

Յուրաքանչյուր հերթափոխի դիմաց՝ դատարկ վանդակներում նշվում է վիճակահանության արդյունքում համապատասխան գործառույթն իրականացնող հանձնաժողովի անդամի անուն-ազգանունը:





Վիճակահանության արդյունքում, ըստ հանձնաժողովի անդամներին բաժին ընկած թերթիկների նշումների, հանձնաժողովի անդամների միջև բաշխվում են առաջին հերթափոխի կողմից քվեարկությունը կազմակերպելու համար նախատեսված պարտականությունները:

**Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ամեն հերթափոխի ժամանակ իրականացնում է այն գործառույթը, որի անվանումը պարունակող թերթիկը վիճակահանությամբ բաժին է ընկել իրեն:**

Հանձնաժողովի նախագահը վիճակահանությունների արդյունքներին համապատասխան ապահովում է հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ հերթափոխը:

**Մինչև տեղամասային կենտրոնի բացումը (մինչև ժամը 8:00-ը)** տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ.

- ◆ բացում է չիրկիզվող պահարանը.
- ◆ հանում է հանձնաժողովի անդամների անհատական կնիքները և հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին հանձնում նախորդ օրվա վիճակահանությամբ իրեն տրամադրված անհատական կնիքը, որը մինչև քվեարկության ավարտից հետո փաթեթավորվելը գտնվում է հանձնաժողովի անդամի մոտ.
- ◆ հանում է դրոշմակնիքը.
- ◆ հանում է հարյուրական փաթեթներով քվեաթերթիկները և քվեարկության ծրարները ու հանձնում է քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող անդամին (անդամներին).
- ◆ հանում է ընտրողների ցուցակները և հանձնում է ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամին (անդամներին).
- ◆ հանում է հանձնաժողովի փաթեթավորված կնիքը, ստուգում է փաթեթավորված կնիքի փաթեթի անձեռնմխելիությունը, բացում է փաթեթավորված կնիքը՝ մկրատով կտրելով փաթեթը կետագծով նշված տեղում, գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը.
- ◆ հանձնաժողովի կնիքը և դրոշմակնիքը հանձնում է քվեարկության ծրարները կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամին: Նրան է փոխանցվում քվեարկության ծրարները կնքելու համար բարձիկը և ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելու համար բարձիկը: Դրոշմակնքման համար նախատեսված հատուկ թանաքը պահվում է չիրկիզվող պահարանում.
- ◆ ստուգում է քվեատուփի դատարկ լինելը (բարձրաձայն հայտնելով այդ մասին), և մինչև փակելը այն ցուցադրում է նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց, ապա փակում և կնքում է քվեատուփը:




Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:

#### ❗ Ուշադրություն

Նշված բոլոր գործողությունները կատարվում են այն հաշվով, որպեսզի ժամը 8:00-ի դրությամբ կատարված և ավարտված լինեն:

**11****ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ  
ՍԿԻԶԲԸ****Ուշադրություն**

Ժամը 8:00-ին տեղամասը պետք է լինի լիարժեք պատրաստ քվեարկությունը սկսելու համար: Հանձնաժողովի անդամները պետք է զբաղեցրած լինեն իրենց տեղերը: Սեղաններին պետք է լինեն ընտրական բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ժամը 8:00-ին, բարձրաձայն հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:



**Ուշադրություն**

Եթե քվեարկության օրը՝ ժամը 8:00-ին, մինչև **1 000** ընտրող ունեցող ընտրական տեղամասի դեպքում 5-ից պակաս, իսկ **1 000-ից ավելի** ընտրող ունեցող ընտրական տեղամասի դեպքում 7-ից պակաս թվով տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ է ներկայացել, ապա **տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը անմիջապես տեղեկացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին**: Չներկայացած անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարում են, և անդամների թիվը համապատասխանաբար մինչև 5 և 7 անդամ լրացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու իրավունք ունեցող անձանց թվից:

**Տեղամասային կենտրոնը բացվելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը անմիջապես տեղեկացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տեղամասը բացված լինելու մասին:**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ**

- ◆ կազմակերպում և վերահսկում է քվեարկության կազմակերպումն ու անցկացումը, անհրաժեշտության դեպքում օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց բացակայության դեպքում.
- ◆ պահպանում է կարգ ու կանոնը տեղամասային կենտրոնում և ապահովում է քվեարկության գաղտնիությունը.
- ◆ կարգավորում է ընտրողների հոսքը տեղամասային կենտրոն.
- ◆ ըստ անհրաժեշտության քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ է տրամադրում հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին, նրանից ընդունելով օգտագործված քվեաթերթիկների ելունդները.



- ◆ վիճակահանությունների արդյունքներին համապատասխան ապահովում է հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ հերթափոխը:

**Հանձնաժողովի քարտուղարը** հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ գրառումներ է կատարում գրանցամատյանում, օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց բացակայության դեպքում:

## ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԸ

Արգելվում է տեղամասային կենտրոն զենքով, ռազմամթերքով մուտք գործելը:

Քվեարկության բնականոն ընթացքի վտանգման դեպքերում տեղամասային կենտրոն զենքով մուտք գործել կարող են միայն ոստիկանության ծառայողները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:

Քվեարկության սենյակում կուտակումներից ու խառնաշփոթից խուսափելու նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պետք է հսկի և պարբերաբար ստուգի, թե քվեարկողներից բացի ովքեր են ներկա տեղամասային կենտրոնում, և արդյո՞ք բոլորն ունեն տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք:

Տեղամասային կենտրոնում, ընտրական հանձնաժողովի անդամներից և քվեարկողներից բացի, կարող են ներկա լինել՝

- ◆ Վերադաս ընտրական հանձնաժողովների անդամները,
- ◆ Յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի մեկ վստահված անձ,
- ◆ Յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև երկու դիտորդ՝ թարգմանչի ուղեկցությամբ, իսկ տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից՝ մեկ դիտորդ,
- ◆ Յուրաքանչյուր լրատվության միջոցը ներկայացնող մեկ լրագրող և մեկ լուսանկարիչ կամ տեսաձայնագրման մեկ օպերատոր:

### **Ուշադրություն**

Քվեարկության սենյակում միաժամանակ չի կարող գտնվել 15-ից ավելի քվեարկող:

Քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն իրավունք ունի ընտրողներին քվեարկության սենյակ թողնելու հերթով՝ մեկ-մեկ, եթե քվեարկության սենյակում միաժամանակ առկա են 15 քվեարկող: Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից այդ գործառույթի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ոստիկանության (հերթապահող ոստիկանի) օժանդակությամբ:

### **Ուշադրություն**

Քվեարկության ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ մինչև ժամը 11:30-ը, 14:30-ը, 17:30-ը և 20:30-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով հաղորդում է համապատասխանաբար մինչև ժամը 11:00-ն, 14:00-ն, 17:00-ն և 20:00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը:

**Հաղորդված թվերը գրառվում են նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:**





**12**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԸ**

**Ընտրողը քվեարկությանը մասնակցում է անձամբ. լիազորված քվեարկությունն արգելվում է:**

## **ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ**

**1**

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող նախ պետք է գրանցվի: Առանց սահմանված կարգով գրանցվելու՝ ընտրողը չի կարող քվեաթերթիկ ստանալ և քվեարկել:

Հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամը.

- ◆ Ընտրողից վերցնում է անձը հաստատող փաստաթուղթը

***Անձը հաստատող փաստաթուղթ է՝***

- ✓ անձնագիրը (առանց կենսաչափական տվյալների),
- ✓ անձնագրին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից,

**Ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ նրան քվեարկության չթողնելու համար:**

- ◆ ստուգում է ընտրողի ինքնությունը,
- ◆ ընտրողների ցուցակում գտնում է նրա անուն-ազգանունը, դրա դիմացի դատարկ սյունակում լրացնում է անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
  - ✓ Ընտրողների ցուցակում տեղ գտած տառասխալը կամ թվային սխալը, մնացած տվյալների համապատասխանության դեպքում, հիմք չեն ընտրողին քվեարկելուց զրկելու համար:
  - ✓ Հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամն ընտրողների ցուցակում տառասխալ կամ տեխնիկական վրիպակ հայտնաբերելու դեպքում (ընտրողի վերաբերյալ մնացած տվյալների համապատասխանության դեպքում), այդ մասին տեղեկացնելով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, ընտրողների ցուցակի լրացուցիչ նշումների սյունակում նշում է ճշգրտված տվյալը և ընտրողին հնարավորություն տալիս մասնակցել քվեարկությանը:
- ◆ ընտրողը ստորագրում է այդ տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում,
- ◆ ընտրողի գրանցումն իրականացնող անդամն **իր անհատական կնիքն է** դնում ընտրողի ստորագրության դիմաց՝ համապատասխան սյունակում:

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա նա իրավունք ունի դիմելու այլ քաղաքացու օգնության՝ **բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամների:**

## ՔՎԵԱԹԵՐԹԻԿ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱՐ ՍՏԱՆԱԼԸ

2

Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին:

Քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամը՝

- ◆ Անջատում է քվեաթերթիկի ելունդը և քվեաթերթիկի ներքևի հատվածը քվեարկության ծրարի հետ միասին հանձնում ընտրողին:
- ✓ Քվեաթերթիկների տպագրումից հետո Երևանի ավագանու ընտրությանը մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի առաջին երեք համարներում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը, ընտրական ցուցակից թեկնածուի անունը քվեաթերթիկներից հանում են տեղամասային ընտրական հանձնաժողովները մինչև քվեաթերթիկն ընտրողին հանձնելը՝ հորիզոնական գիծ քաշելով քվեաթերթիկի այդ թեկնածուի անունը պարունակող համապատասխան տողի վրա:
- ◆ Խնդրում է ընտրողին անցնել քվեարկության խցիկ և քվեաթերթիկը լրացնել միայն քվեարկության խցիկում:

## ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

3

Ստանալով քվեաթերթիկը և քվեարկության ծրարը ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:



**Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:**

- Ընտրողը քվեաթերթիկում V ձևի նշում է կատարում այն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանման դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում:
- ✓ Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, **որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ:**
- ✓ Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի: Օգնողն իրավունք չունի իր կամքը թելադրել ընտրողին կամ գործել ընտրողի կամքին հակառակ: Օգնողն իրավունք չունի հրապարակել, թե ում օգտին է քվեարկել ընտրողը:
- ✓ Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է:
- ✓ Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

- Ընտրողը քվեաթերթիկում նշում կատարելուց հետո քվեարկության խցիկում քվեաթերթիկը դնում է ծրարի մեջ:
- ✓ Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար:
- ✓ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ, ընտրողների ցուցակում կատարվում է համապատասխան նշում տվյալ ընտրողի անվան, ազգանվան դիմաց: **Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկին ամրացվում է քվեաթերթիկի ցանկացած մեկ ելունդ, և քվեաթերթիկն անհապաղ մարվում է:**

## **ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱՐԻ ԿԼՔՈՒՄ ԵՎ ՔՎԵԱՏՈՒՓ**

**4**

- Ընտրողը մոտենում է քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամին:
- Քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամը՝
  - ◆ Պարտադիր ստուգում է ընտրողի անձը հաստատող փաստաթղթում տվյալ ընտրությանը մասնակցելու վերաբերյալ դրոշմակնիքի բացակայությունը,
  - ◆ Տվյալ ընտրությանը մասնակցելու վերաբերյալ դրոշմակնիքի բացակայության դեպքում դրոշմակնքում է ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը:
    - ✓ Եթե ընտրողի անձը հաստատող փաստաթղթում առկա է տվյալ ընտրությանը մասնակցելու մասին դրոշմակնիք, **ապա հանձնաժողովի անդամը հանձնաժողովի նախագահի միջոցով տեղեկացնում է հերթապահող ոստիկաններին հանցագործության փորձի մասին**, հանում է քվեաթերթիկը քվեարկության ծրարից, ծրարը վերադարձնում քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող հանձնաժողովի անդամին, իսկ քվեաթերթիկին ամրացնելով քվեաթերթիկի ցանկացած մեկ ելունդ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անհապաղ մարում է:
    - ✓ Քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամն իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել (հանձնաժողովի այլ անդամին կամ վստահված անձին ներկայացնել) ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը:
  - ◆ Ընտրողը քվեարկության ծրարը դնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամի աշխատասեղանին,
  - ◆ Հանձնաժողովի անդամն առանց ծրարը ձեռքը վերցնելու, կնիք է դնում ծրարի ցանկացած կողմում (տեղում),
  - ◆ Բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու համար:

**Քվեարկության ծրարը կնքվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով: ՏԸՀ-ի կնիքը քվեարկության ողջ ընթացքում պետք է գտնվի քվեատուփի մոտ՝ բոլորի համար տեսանելի տեղում:**

### ❗ Ուշադրություն

- Ընտրողը կամ որևէ այլ անձ որևէ եղանակով իրավունք չունի լուսանկարել, տեսանկարել քվեարկած քվեաթերթիկը, ընտրողը իրավունք չունի ցուցադրել իր քվեարկած քվեաթերթիկը:


### ❗ Ուշադրություն

- Քվեարկելուց հետո ընտրողը պետք է անհապաղ դուրս գա տեղամասային կենտրոնից:

Արգելվում է քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Սույն մասի դրույթների կատարումն ապահովում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից:

## ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

- ◆ Երևանի ավագանու ընտրության ժամանակ պատրաստվում և տեղամասային ընտրական հանձնաժողովին է հատկացվում քվեաթերթիկին համապատասխանող սովորաթղթե կաղապար (ձևանմուշ), որում քվեաթերթիկի նշումի համար նախատեսված քառանկյուններին համապատասխանող տեղերում բացված են «V» ձևի անցքեր,
- ◆ հանձնաժողովի քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ տրամադրող անդամը քվեաթերթիկը տեղավորում է քվեաթերթիկին համապատասխանող կաղապարում և քվեարկության ծրարի հետ միասին տրամադրում ընտրողին: Քվեաթերթիկը լրացնելիս ընտրողին օգնելու իրավունք ունեցող քաղաքացին, ընտրողի համար՝ ըստ հերթականության, կարողում է քվեաթերթիկում ընդգրկված կուսակությունների (կուսակցությունների դաշինքների) վերաբերյալ քվեաթերթիկում նշված տվյալները և հնարավորություն տալիս ընտրողին քվեախցիկում գաղտնի լրացնելու քվեաթերթիկը,
- ◆ ընտրողն իմանալով իր նախընտրած կուսակության (կուսակցությունների դաշինքի) հերթական համարը քվեաթերթիկում, շոշափելով կարող է գտնել կաղապարի համապատասխան դատարկ անցքը և ինքնուրույն «V» ձևի նշում կատարել քվեաթերթիկում,
- ◆ քվեաթերթիկում «V» ձևի նշում կատարելուց հետո ընտրողը քվեաթերթիկը հանում է կաղապարից, ծալում, ինքնուրույն կամ իրեն օգնելու իրավունք ունեցող քաղաքացու օժանդակությամբ այն տեղավորում քվեարկության ծրարում,
- ◆ քվեարկության հետ կապված մնացած գործողություններն ընտրողն իր ցանկությամբ կատարում է ինքնուրույն կամ իրեն օգնելու իրավունք ունեցող քաղաքացու օժանդակությամբ:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը տեղեկանալով, որ տեղամասային կենտրոնի տեղակայման շենքի մոտ է գտնվում շարժասայլակով տեղաշարժվող ընտրող՝ միջոցներ է ձեռնարկում տեղամասային կենտրոնում ներկա գտնվող անձանց օգնությամբ վերջինիս՝ իր համար նախընտրելի եղանակով, քվեարկության սենյակ տեղափոխելու և քվեարկության սենյակից դուրս գալու համար: Եթե շարժասայլակով տեղաշարժվող ընտրողը հրաժարվում է քվեարկության մատչելիության այս եղանակից, ապա նա կարող է օգտվել ՀՀ ԿԸՀ 30.06.2011թ. N 19-Ն որոշմամբ սահմանված կարգից:




5. տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը տեղեկանալով, որ տեղամասային կենտրոնի տեղակայման շենքի մոտ է գտնվում շարժասայլակով տեղաշարժվող ընտրող (այսուհետ՝ ընտրող), տեղամասային կենտրոնում հայտարարում է այդ մասին, մոտենում է ընտրողին և նրան բացատրում սույն որոշման համապատասխան քվեարկությանը մասնակցելու կարգը,
6. ընտրողի համաձայնության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վերցնում է ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը, ստուգում նրա ինքնությունը և ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը տեղամասային կենտրոնում հանձնում ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամին: Վերջինս ընտրողների ցուցակում լրացնում է անձը հաստատող փաստաթղթի տվյալները: Այդ տվյալների դիմաց ընտրողի համաձայնությամբ նրա փոխարեն ստորագրում է որևէ վստահված անձ կամ դիտորդ կամ ընտրողին օգնելու իրավունք ունեցող քաղաքացի: Ընտրողի գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողի ստորագրության դիմաց իր անհատական կնիքը դնելուց հետո նույն տողի լրացուցիչ նշումների սյունակում լրացնում է «շարժասայլակ» բառը, որից հետո ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը վերադարձնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին,
7. տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողի փոխարեն ստանում է քվեաթերթիկ և քվեարկության ծրար և տեղամասային կենտրոնի տեղակայման շենքի մոտ դրանք հանձնում ընտրողին՝ նրան հնարավորություն տալով գաղտնի քվեարկելու: Քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո ընտրողը ծալում է քվեաթերթիկը, տեղավորում քվեարկության ծրարի մեջ և այն հանձնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին,
8. տեղամասային կենտրոնում քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը դրոշմակնքում է ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը, կնքում քվեարկության ծրարը և հնարավորություն է ընձեռում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու համար: Քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը անձը հաստատող փաստաթուղթը հանձնում է ընտրողին և անհապաղ վերադառնում տեղամասային կենտրոն:

Նշված գործողությունները տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին իրականացնում է առնվազն 1 վստահված անձի կամ առնվազն 1 դիտորդի, կամ վստահված անձի ու դիտորդի, կամ ընտրողին օգնելու իրավունք ունեցող քաղաքացու ներկայությամբ (մասնակցությամբ):

**13****ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ՓԱԿՈՒՄԸ**

**Ժամը 20:00 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը** հայտարարում է քվեարկության ավարտի մասին և

- ◆ արգելում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ.
- ◆ քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս.
- ◆ փակում է քվեատուփի ճեղքը.
- ◆ փակում տեղամասային կենտրոնը:

**! Ուշադրություն**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը մինչև ժամը 20:30-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով հաղորդում է մինչև ժամը 20:00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ**

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է հենց քվեարկության սենյակում:

**! Ուշադրություն**

Քվեարկության ավարտից հետո՝ մինչև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը չի կարող ընդհատվել:

**Քվեարկության արդյունքների ամփոփման փուլում անհրաժեշտ է խստորեն պահպանել ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված գործողությունների հաջորդականությունը.**

- 1** **փաթեթավորվում են** հանձնաժողովի անդամների անհատական կնիքները և փաթեթը **կնքվում է.**
- 2** հաշվարկվում են չօգտագործված, ընտրողների կողմից ոչ ճիշտ լրացված (վնասված) և հետ տրված քվեաթերթիկների ընդհանուր թիվը: Այդ թվին ավելացվում են նախկինում մարված՝ ընտրողի կողմից ոչ ճիշտ լրացված և հետ տրված, տպագրական խոտանի պատճառով սահմանված նմուշից տարբերվող կամ կրկնվող համարով քվեաթերթիկները: Ստացված թիվը բարձրաձայն հրապարակվում է և լրացվում գրանցամատյանում: Չօգտագործված քվեաթերթիկները մարվում են դրանք ներքևի աջ կամ ձախ անկյունից կտրելու միջոցով, այնպես, որ չվնասվեն հանձնաժողովի անդամների՝ քվեաթերթիկի վրա առկա ստորագրությունները.
- 3** փաթեթավորվում են օգտագործված քվեաթերթիկների ելունդները.
- 4** հաշվարկվում է՝

✓ **Ընտրողների հիմնական ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը**

✓ **քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը**

### ❗ **Ուշադրություն**

Ընտրական ցուցակների ընտրողների թվերը հաշվարկվելուց հետո, յուրաքանչյուր ցուցակի դեպքում, բարձրաձայն հրապարակվում են և լրացվում գրանցամատյանում:

Բոլոր ցուցակների ընտրողների թվերը գումարվում են, գումարը բարձրաձայն հրապարակվում է որպես ընտրողների ընդհանուր թիվ և լրացվում գրանցամատյանում:

**5**

Ընտրողների ցուցակներում (այդ թվում՝ քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակում) ընտրողների ստորագրությունների հիման վրա հաշվարկվում է քվեարկության մասնակիցների (քվեաթերթիկներ ստացած ընտրողների) թիվը, բարձրաձայն հրապարակվում և լրացվում գրանցամատյանում:

**Հանձնաժողովի նախագահը գրանցամատյանում արձանագրված՝ ընտրական տեղամասում քվեարկության մասնակիցների թիվը կապի հնարավոր միջոցներով անհապաղ հայտնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:**

### ❗ **Ուշադրություն**

- տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները,
- մարված քվեաթերթիկները (մարված են համարվում՝ չօգտագործված, ընտրողների կողմից ոչ ճիշդ լրացված (վնասված) և հետքերով, տպագրական խտրանի պատճառով սահմանված նմուշից տարբերվող կամ կրկնվող համարով քվեաթերթիկները),
- օգտագործված քվեաթերթիկների ելույթները,
- ընտրողների ցուցակները, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակը և դրանց համար հիմք հանդիսացող տեղեկանքները (դատարանի վճիռները),

փաթեթավորվում են առանձին ծրարներում տեղադրելու և ծրարներից յուրաքանչյուրի վրա դրա պարունակության վերաբերյալ նշում կատարելու միջոցով:

Ծրարները փակման մասում սոսնձվում են և կնքվում հանձնաժողովի կնիքով:

Ծրարների վրա պետք է առկա լինի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրելու ծրարների վրա կամ սեփական դրոշմով դրոշմելու ծրարները:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը հավաքում է չօգտագործված քվեարկության ծրարները և փաթեթավորում՝ մեկանգամյա օգտագործման պարկի հետ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելու համար: **Չօգտագործված ծրարների փաթեթը պարկի մեջ չի դրվում:**



**14**

## ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

**Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը միայն նախորդ գործողությունները կատարելուց և ավարտելուց հետո:**


**Տեսակավորման ողջ ընթացքում հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ և նշումներ կատարելու այլ առարկաներ:**

**Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն.**

Հանձնաժողովի նախագահը քվեատուփից հանում է քվեարկության մեկ ծրար, բարձրաձայն հայտարարում ծրարի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին, ապա ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկայների համար:

**Քվեարկության չսահմանված նմուշի ծրարներ են համարվում.**

- ◆ սահմանված նմուշից ակնհայտ տարբերվող քվեարկության ծրարը,
- ◆ չկնքված կամ այլ կնիքով կնքված քվեարկության ծրարը,
- ◆ ընտրողի ինքնությունը բացահայտող նշումներ ներառող քվեարկության ծրարը:



Այս ծրարները չեն բացվում, պարունակությունը չի ստուգվում և դրանք անհապաղ մարվում են:

**Չսահմանված նմուշի ծրարներ են համարվում նաև այն ծրարները, որոնք բացելուց հետո պարզվում է, որ՝**

- ◆ քվեաթերթիկ չեն պարունակում.
- ◆ պարունակում են մեկից ավելի քվեաթերթիկ.
- ◆ պարունակում են չսահմանված նմուշի քվեաթերթիկ:

Նման դեպքերում, մեկից ավելի քվեաթերթիկները կամ չսահմանված նմուշի քվեաթերթիկը (քվեաթերթիկները) նորից տեղադրվում է ծրարի մեջ, մարվում ծրարի հետ միասին և դրվում չսահմանված նմուշի ծրարների փաթեթի մեջ:

Եթե ծրարը դատարկ է, ապա նույնպես մարվում է և դրվում չսահմանված նմուշի ծրարների փաթեթի մեջ: **Այս փաթեթի վրա նշվում է «Չսահմանված նմուշի քվեարկության ծրարներ» բառերը, և այն առանց պարկի մեջ տեղադրելու, ներկայացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:**

Պահանջի դեպքում քվեարկության ծրարը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին:

Հանձնաժողովի նախագահի արտահայտած կարծիքին համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն:

Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և եթե հանձնաժողովի անդամի առաջարկությունը քվեարկությամբ չի ընդունվում, ապա ընդունված է համարվում հանձնաժողովի նախագահի առաջարկությունը:

Առարկություն չլինելու դեպքում հանձնաժողովի նախագահը, իր հայտարարության համաձայն, սահմանված նմուշի քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը:



## Սահմանված նմուշի քվեարկության ծրարները տեսակավորվում են առանձին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին, վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում նաև, թե ինչպես է քվեարկված, ապա ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար:


- ◆ Չսահմանված նմուշի է սահմանված նմուշից տարբերվող քվեաթերթիկը, ինչպես նաև՝
  - ✓ քվեարկության չսահմանված նմուշի ծրարում գտնվող քվեաթերթիկը.
  - ✓ ծրարում գտնվող քվեաթերթիկները, եթե դրանց թիվը մեկից ավելի է.
  - ✓ քվեատուփում գտնվող՝ առանց քվեարկության ծրարի քվեաթերթիկները:

Չսահմանված նմուշի քվեաթերթիկները ևս անհապաղ մարվում են: Չսահմանված նմուշի քվեաթերթիկները ևս դրվում են «**Չսահմանված նմուշի քվեարկության ծրարներ**» փաթեթի մեջ:

### ❗ Ուշադրություն

Յուրաքանչյուր քվեաթերթիկ արտահայտում է ընտրողի կամաարտահայտությունը, և չի կարելի կամայականորեն վարվել նրա հետ: **Քվեաթերթիկը վավեր է, եթե այն անվավեր չէ:**

## Սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝




- ◆ մեկից ավելի կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին նշումներ է ներառում.
- ◆ որևէ նշում չի ներառում.
- ◆ բացի քվեարկության համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կամ դրան նմանվող նշանից ներառում է այլ՝ ընտրողի ինքնությունը բացահայտող նշում.
- ◆ ընտրական հանձնաժողովի անդամի կողմից ստորագրված կամ սեփական դրոշմով դրոշմված կամ անհատական կնիքով կնքված չէ.
- ◆ ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը:

**Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա:**

ՎԱՎԵՐ ՆՇԱԳՐՈՒՄ



ԱՆՎԱՎԵՐ ՆՇԱԳՐՈՒՄ




Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին:

Հանձնաժողովի նախագահի արտահայտած կարծիքին համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն:

Առարկության դեպքում քվեարկության արդյունքով (քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և եթե հանձնաժողովի անդամի առաջարկությունը քվեարկությամբ չի ընդունվում, ապա ընդունված է համարվում հանձնաժողովի նախագահի առաջարկությունը), իսկ առարկություն չլինելու դեպքում հանձնաժողովի նախագահը, իր հայտարարության համաձայն, ըստ քվեաթերթիկում կատարված քվեարկության նշումի, քվեաթերթիկը դնում է համապատասխան կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ, իսկ ծրարը՝ սահմանված նմուշի քվեարկության ծրարների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ ծրարը:

**Այս գործողությունները կրկնվում են քվեատուփում առկա բոլոր ծրարների և քվեաթերթիկների համար:**



**Քվեարկության ծրարները և քվեաթերթիկները տեսակավորելուց հետո մեկ առ մեկ հաշվարկվում են.**

- ◆ յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,
- ◆ անվավեր քվեաթերթիկների թիվը.
- ◆ սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը:

**Հաշվարկված թվերը բարձրաձայն հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում:**

#### **❗ Ուշադրություն**

- սահմանված նմուշի քվեարկության ծրարները,
- յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկները,
- անվավեր քվեաթերթիկները

փաթեթավորվում են առանձին ծրարներում տեղադրելու և ծրարներից յուրաքանչյուրի վրա դրա պարունակության վերաբերյալ նշում կատարելու միջոցով:

Ծրարները փակման մասում սոսնձվում են և կնքվում հանձնաժողովի կնիքով:

Ծրարների վրա պետք է առկա լինի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրելու ծրարների վրա կամ սեփական դրոշմով դրոշմելու ծրարները:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրառվում են ստորագրողների անուն-ազգանունները, դրվում նրանց ստորագրության կամ սեփական դրոշմի նմուշները:

**15**

## ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**Հիմք** ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն: Արձանագրության թվերը լրացվում են թվերով և տառերով:



### Ուշադրություն

Երևանի ավագանու ընտրության քվեարկության արդյունքների արձանագրությունների կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո՝ մինչև 2013 թվականի մայիսի 6-ը, ժամը 6:00-ն:



Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները, այն կնքում է հանձնաժողովի նախագահը:

Հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել արձանագրությունը: Եթե նա արձանագրության տվյալների վերաբերյալ ունի առարկություն (հատուկ կարծիք), ապա այդ մասին գրառում է կատարում արձանագրությունում՝ դրա համար նախատեսված հատուկ տեղում:



### Ուշադրություն

Արձանագրությունը ստորագրվում է միայն բոլոր տվյալները լրացվելուց հետո: Արգելվում է նախապես ստորագրել քվեարկության արդյունքների արձանագրության ձևաթուղթը:



### Ուշադրություն

Ընտրական հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

**Տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունը կազմվում է 4 օրինակից.**

- ◆ մեկ օրինակը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին,
- ◆ մեկ օրինակը տեղադրվում է ընտրական փաստաթղթերի պարկում,
- ◆ երկու օրինակը ներկայացվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

**16**

## ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՐԿԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկում են դրվում՝

- ☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքների փաթեթը,
- ☐ մարված քվեաթերթիկների փաթեթը,
- ☐ օգտագործված քվեաթերթիկների ելունդների փաթեթը,
- ☐ ընտրողների ցուցակների փաթեթը,
- ☐ յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների փաթեթները,
- ☐ անվավեր քվեաթերթիկների փաթեթը,
- ☐ սահմանված նմուշի ծրարների փաթեթը,
- ☐ տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը:

### ◆ Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկում չեն դրվում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխվում առձեռն՝

- ✓ հանձնաժողովի կնիքը,
- ✓ դրոշմակնիքը, հատուկ թանաքը և դրա բարձիկը,
- ✓ գրանցամատյանը,
- ✓ չօգտագործված ծրարների փաթեթը,
- ✓ չսահմանված նմուշի քվեարկության ծրարների փաթեթը,
- ✓ քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը:

Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը փակվում է փակման համար նախատեսված տեղի ժապավենը հեռացնելու, այդ մասում՝ պարկի երկու կողմերը իրար միացնելու և այդ միացման տեղում պարկի երկու կողմերն իրար ամուր սեղմելու միջոցով:

Մեկանգամյա օգտագործման պարկի վրա պետք է առկա լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրելու պարկի վրա կամ սեփական դրոշմով դրոշմելու պարկը: Գրանցամատյանում գրառվում են ստորագրողների անուն-ազգանունները, դրվում ստորագրության կամ դրոշմի նմուշները:

Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում փակվում է, որի համար **պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:**

**17****ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ****ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ****ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ**

**Քվեարկության ավարտից հետո ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում (մինչև 2013թ. մայիսի 6-ը, ժամը 8:00-ն) ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում:**

- ◆ ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը,
- ◆ քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակները,
- ◆ չօգտագործված քվեարկության ծրարները,
- ◆ չսահմանված նմուշի քվեարկության ծրարների փաթեթը,
- ◆ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը,
- ◆ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը, դրոշմակնիքը, հատուկ թանաքը և բարձիկը,
- ◆ քվեատուփը,
- ◆ քվեարկության խցիկները:



Ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխում ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ:

Ընտրական փաստաթղթերն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում հանձնվում և ընդունվում են հանձնողի ու ընդունողի կողմից ստորագրելու և ստացական տալու միջոցով:

Դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, վստահված անձինք քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո կարող են իրենց միջոցներով ուղեկցել ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից ընտրատարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

**ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ****ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ**

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը, **իսկ թվաքանական սխալների առկայության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:**

**Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված տվյալները:**

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում նշում է կատարվում տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության ընդունման ամսաթվի և ժամի մասին, ինչը վավերացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և հանձնաժողովի կնիքով:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը համեմատում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի համարը տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության կնիքի համարի հետ:



18

## ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները կարող են բողոքարկվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:



***Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող է բողոքարկել՝***


- ◆ յուրաքանչյուր ոք, եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը (ընտրելու կամ ընտրվելու իրավունքը).
- ◆ վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները.
- ◆ դիտորդը, եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները.
- ◆ տվյալ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե գտնում է, որ հանձնաժողովը, որի անդամն է ինքը, խախտել է իր կամ այլ անձանց՝ ընտրական օրենսգրքով սահմանված որևէ իրավունք:

Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին կարող է ներկայացնել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում:

Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները կարող են բողոքարկվել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

**Քվեարկության օրվա ընթացքում** տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել **քվեարկության օրը կամ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն:**



**Քվեարկության օրվա նախորդող օրերի ընթացքում** տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով **օրացուցային 2 օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին:**

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն:

- ◆ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացնել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում:

**Վերահաշվարկի դիմումը պետք է ներառի.**

- ◆ դիմումատուի անունը, ազգանունը, ստորագրությունը,
- ◆ տրման ամսաթիվը,
- ◆ փոստային հասցեն,
- ◆ այն ընտրական տեղամասի համարը, որում պահանջվում է կատարել վերահաշվարկ,
- ◆ քվեարկության արդյունքները որոնց վերաբերյալ պահանջվում է վերահաշվարկ անցկացնել:

**Դիմումին կարող են կցվել քվեարկության արդյունքների սխալ ամփոփման ապացույցներ:**

Դիմումատուի հրաժարվելը քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմումից հիմք չէ վերահաշվարկ չիրականացնելու համար:

Քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում ներկայացնողի բացակայությունը հիմք չէ վերահաշվարկ չանցկացնելու կամ այն դադարեցնելու համար:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը մերժում է ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումը և վերահաշվարկ չի իրականացնում, եթե պահանջվել է քվեարկության արդյունքների վերահաշվարկի իրականացում ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի դրույթների խախտումով:

# ՀԱՎԵԼՎԱԾ 1



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳԻՐՔ

### ՀՈԴՎԱԾ 40.1. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԿԱՄ ԴՐԱՆ ՆԱԽՈՐԴՈՂ ՕՐԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԸ

Քվեարկության օրը կամ դրան նախորդող օրը նախընտրական քարոզչություն կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Նույն արարքը տեղամասային կենտրոնի շենքի ներսում, մուտքի մոտ կամ շենքի շուրջը բանավոր կամ գրավոր ձևով, երաժշտության կամ պատկերավոր միջոցների օգնությամբ, ստորագրությունների հավաքմամբ՝ ընտրողների կամաարտահայտման վրա ներագրելու միջոցով կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:

Նույն արարքը զանգվածային լրատվության միջոցներով կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:

### ՀՈԴՎԱԾ 40.2. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՉՍՏՈՐԱԳՐԵԼԸ

Ընտրական հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

### ՀՈԴՎԱԾ 40.4. ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՐԿԸ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՉՓԱԿԵԼԸ

Ընտրական փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

### ՀՈԴՎԱԾ 40.6. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՏՅԱՆԸ ՉԼՐԱՑՆԵԼԸ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԼՐԱՑՆԵԼԸ

Ընտրական հանձնաժողովի գործավարության մատյանը չլրացնելը կամ ոչ պատշաճ լրացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի չափով:





## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊԻՐՔ**

### **ՀՈՂՎԱԾ 149. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ, ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԿԱՄ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼԸ**

1. Քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորված անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով:
2. Նույն արարքները, որոնք՝
  - 1) կատարվել են գույքին վնաս պատճառելու սպառնալիքով,
  - 2) կատարվել են նյութապես շահագրգռելով,
  - 3) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
  - 4) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,
  - 5) կատարվել են մի խումբ անձանց կողմից,
  - 6) զուգորդվել է անձին ազատությունից զրկելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից մինչև հինգ տարի ժամկետով:

### **ՀՈՂՎԱԾ 153. ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ԱՆԳԱՄ ԿԱՄ ԱՅԼ ԱՆՁԻ ՓՈԽԱՐԵՆ ՔՎԵԱՐԿԵԼԸ**

Կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթ ներկայացնելու կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով:

### **ՀՈՂՎԱԾ 154. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼԸ**

Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով:

### **ՀՈՂՎԱԾ 154.1. ԿԵՂԾ ԸՆՏՐԱԿԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐ ԿԱՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱՐՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ ԿԱՄ ԱԿՆՀԱՅՏ ԿԵՂԾ ԸՆՏՐԱԿԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐ ԿԱՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱՐՆԵՐ ՀԱՆՁՆԵԼԸ ԿԱՄ ԻՐԱՑՆԵԼԸ**

1. Անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ այլ եղանակով իրացնելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:
2. Նույն արարքը, որը կատարվել է խոշոր չափերով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

#### **ՀՈՒՎԱԾ 154.2. ԸՆՏՐՈՂԻ ԿԱՄՔԻ ԱԶԱՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼԸ**

Թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

Ընտրողին թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը, որը կատարվել է գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք տալով, բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

#### **ՀՈՒՎԱԾ 154.3. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՆԻՔԸ ԶՎԵՐԱԴԱՐՁՆԵԼԸ, ԿՆԻՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԸ ԽԱԽՏԵԼԸ**

Ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում դրա համար պատասխանատու անձի կողմից չվերադարձնելը, ինչպես նաև կնիքի պահպանման համար սահմանված կարգը խախտելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

#### **ՀՈՒՎԱԾ 154.4. ԶԵՆՔՈՎ՝ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԸ**

Քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն (քվեարկության խցիկ) մուտք գործելն առանց ծառայողական անհրաժեշտության՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

#### **ՀՈՒՎԱԾ 154.5. ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻՆ, ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻՆ, ԴԻՏՈՐԴԻՆ ԿԱՄ ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒՆ ԽՈՉԸՆԴՈՏԵԼԸ, ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԵՆՆԵՐ ԶՏԱԼԸ**

Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

#### **ՀՈՒՎԱԾ 154.6. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՎԱՏԱՐԵԼԸ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵԼԸ**

Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի արդյունքում անհնարին է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2



### ՀՈՒՇԱԹԵՐԹ

### ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

#### ՄԻՆՉԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՈՒՄԸ

**Քվեարկության օրը ժամը 7:00-8:00**

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների հաջորդականություն.**

- ☐ ստուգել պահարանին սուսնձված թղթի ամբողջականությունը և ոստիկանության ծառայողներից ընդունել չհրկիզվող պահարանը,
- ☐ գրանցամատյանում լրացնել պահարանն ընդունելու մասին արձանագրությունը,
- ☐ իրականացնել վիճակահանություն հանձնաժողովի անդամների գործառույթներն ու դրանց հերթափոխը որոշելու համար,
- ☐ վիճակահանության արդյունքները գրանցել գրանցամատյանում,
- ☐ բացել չհրկիզվող պահարանը.
- ☐ հանել հանձնաժողովի անդամների անհատական կնիքները և հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին հանձնել նախորդ օրվա վիճակահանությամբ իրեն տրամադրված անհատական կնիքը.
- ☐ հանել դրոշմակնիքը.
- ☐ հանել հարյուրական փաթեթներով քվեաթերթիկները և քվեարկության ծրարները ու հանձնել քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող անդամին (անդամներին).
- ☐ հանել ընտրողների ցուցակները և հանձնել ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամին (անդամներին).
- ☐ հանել հանձնաժողովի փաթեթավորված կնիքը, ստուգել փաթեթավորված կնիքի փաթեթի անձեռնմխելիությունը, բացել փաթեթավորված կնիքը, գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարել կնիքի համարը.
- ☐ հանձնաժողովի կնիքը և դրոշմակնիքը հանձնել քվեարկության ծրարները կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամին: Նրան փոխանցել համապատասխան թանաքներով թանաքոտված բարձիկներ:
- ☐ ստուգել քվեատուփի դատարկ լինելը (բարձրաձայն հայտնել այդ մասին), և մինչև փակելը այն ցուցադրել նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց, ապա փակել և հատուկ կապիչներով կնքել քվեատուփը:



#### **Ուշադրություն**

- Նշված բոլոր գործողությունները կատարվում են այն հաշվով, որպեսզի ժամը 8:00-ի դրությամբ կատարված և ավարտված լինեն:
- Հանձնաժողովի նախագահը ժամը 8:00-ին, բարձրաձայն հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:
- Տեղամասային կենտրոնը բացվելուց հետո հանձնաժողովի նախագահը անմիջապես տեղեկացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տեղամասը բացված լինելու մասին:



#### **Ուշադրություն**

- **Քվեարկության ընթացքում**
- մինչև ժամը 11:30-ը, 14:30-ը, 17:30-ը և 20:30-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով է հաղորդվում համապատասխանաբար մինչև ժամը 11:00-ն, 14:00-ն, 17:00-ն և 20:00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը.
- հաղորդված թվերը գրառվում են նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

## **ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄ**

### **Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների հաջորդականություն.**

- ☐ ժամը 20:00 հայտարարել քվեարկության ավարտի մասին.
- ☐ արգելել ընտրողների մուտքը քվեարկության սենյակ.
- ☐ քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին տալ քվեարկելու հնարավորություն.
- ☐ փակել քվեատուփի ճեղքը.
- ☐ փակել տեղամասային կենտրոնը:

## **ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ**

### **Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների հաջորդականություն.**

- ☐ փաթեթավորել հանձնաժողովի անդամների անհատական կնիքները.
- ☐ հաշվարկել չօգտագործված քվեաթերթիկների թիվը.
- ☐ այդ թվին ավելացնել նախկինում մարված՝ ընտրողի կողմից ոչ ճիշտ լրացված և հետ տրված, տպագրական խոտանի պատճառով սահմանված նմուշից տարբերվող կամ կրկնվող համարով քվեաթերթիկները.
- ☐ ստացված թիվը, որպես մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվ բարձրաձայն հրապարակել և լրացնել գրանցամատյանում.
- ☐ չօգտագործված քվեաթերթիկները մարել դրանք ներքևի աջ կամ ձախ անկյունից կտրելու միջոցով, այնպես, որ չվսասվեն հանձնաժողովի անդամների՝ քվեաթերթիկի վրա առկա ստորագրությունները.
- ☐ փաթեթավորել օգտագործված քվեաթերթիկների ելունդները.
- ☐ առանձին-առանձին հաշվարկել ընտրողների հիմնական և լրացուցիչ ցուցակներում ընդգրկված ընտրողների թվերը.
- ☐ ընտրական ցուցակների ընտրողների թվերը առանձին հաշվարկելուց հետո, յուրաքանչյուր ցուցակի դեպքում, բարձրաձայն հրապարակել և լրացնել գրանցամատյանում.
- ☐ բոլոր ցուցակների ընտրողների թվերը գումարել, գումարը բարձրաձայն հրապարակել որպես ընտրողների ընդհանուր թիվ և լրացնել գրանցամատյանում.
- ☐ ընտրողների ցուցակներում (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակում) ընտրողների ստորագրությունների հիման վրա հաշվարկել քվեարկության մասնակիցների (քվեաթերթիկներ ստացած ընտրողների) թիվը, բարձրաձայն հրապարակել և լրացնել գրանցամատյանում.
- ☐ ընտրողների ցուցակների ծրարը տեղադրել ընտրական փաստաթղթերի պարկում:

## **ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ**

- ☐ բացել քվեատուփը,
- ☐ քվեատուփից հանել քվեարկության մեկ ծրար,
- ☐ բարձրաձայն հայտարարել ծրարի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին,
- ☐ ցուցադրել այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար,
- ☐ սահմանված նմուշի քվեարկության ծրարից հանել քվեաթերթիկը,
- ☐ բարձրաձայն հայտարարել քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին,
- ☐ վավեր քվեաթերթիկի դեպքում բարձրաձայն հայտարարել նաև, թե ինչպես է քվեարկված,
- ☐ քվեաթերթիկը ցուցադրել այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար:

Այս գործողությունները կրկնվում են քվեատուփում առկա բոլոր ծրարների և քվեաթերթիկների համար:

**Քվեարկության ծրարները և քվեաթերթիկները տեսակավորելուց հետո մեկ առ մեկ հաշվարկվում է.**

- ☐ յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,
- ☐ անվավեր քվեաթերթիկների թիվը,
- ☐ սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը.

**Ֆաթեթավորվում են առանձին փաթեթներում (ծրարներում) և յուրաքանչյուրի վրա նշում է դրա պարունակությունը:**

Չսահմանված նմուշի քվեարկության ծրարները և չսահմանված նմուշի քվեաթերթիկները մարվում են, չեն հաշվարկվում, հաշվի չեն առնվում արդյունքներն ամփոփելիս և փաթեթավորվում են առանձին փաթեթում և փաթեթի վրա նշվում է «Չսահմանված նմուշի քվեարկության ծրարներ» բառերը, և այն առանց պարկի մեջ տեղադրելու, ներկայացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

## **ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ**

- ☐ Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն:
- ☐ Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները, այն կնքում է հանձնաժողովի նախագահը:
- ☐ Հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել արձանագրությունը: Եթե նա արձանագրության տվյալների վերաբերյալ ունի առարկություն (հատուկ կարծիք), ապա այդ մասին գրառում է կատարում արձանագրությունում՝ դրա համար նախատեսված հատուկ տեղում:



### **Ուշադրություն**

Արձանագրությունը ստորագրվում է միայն բոլոր տվյալները լրացնելուց հետո:  
Արգելվում է նախապես ստորագրել քվեարկության արդյունքների արձանագրության ձևաթղթերը:

**Արձանագրությունը կազմվում է 4 օրինակից.**

- ☐ արձանագրության **մեկ** օրինակը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին,
- ☐ **մեկ** օրինակը տեղադրվում է ընտրական փաստաթղթերի պարկում.
- ☐ **երկու** օրինակը ներկայացվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրամադրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

# ՀԱՎԵԼՎԱԾ 3

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող ՏԸՀ կնիքը, դրոշմակնիքը, ՏԸՀ անդամի անհատական կնիքը:

| Նկարագրություն                                                                                                        | Երբ է տրամադրվում                                                                                                                            | Որտեղ է գտնվում                                                                                                        | Ինչ թանաք է օգտագործվում   | Որտեղ է օգտագործվում                                                                                                                                                                                                                                                                                                                        |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>ՏԸՀ կնիք</p>                      | <p>Ստացվում է փակ ծրարով, որի վրա առկա են ԿԸՀ և ԸԸՀ կնիքները: Բացվում է <b>միայն</b> քվեարկության օրը: (Կնիքը բազմանգամյա օգտագործման է)</p> | <p>Քվեարկության ողջ ընթացքում գտնվում է քվեատուփի մոտ տեսանելի տեղում: Քվեարկության ավարտից հետո ՏԸՀ նախագահի մոտ:</p> | <p>Սովորական թանաք</p>     | <p>1. Քվեարկության ընթացում <b>քվեարկության ծրարները կնքելու համար</b>,</p> <p>2. քվեարկության ավատից հետո</p> <ul style="list-style-type: none"> <li>• ընտրական փաստաթղթերի փաթեթները կնքելու համար</li> <li>• քվեարկության արձանագրությունները և քաղվածքները կնքելու համար:</li> </ul>                                                    |
| <p>ՏԸՀ դրոշմակնիք</p>              | <p>Քվեարկության օրը</p>                                                                                                                      | <p>Քվեատուփի մոտ:</p>                                                                                                  | <p><b>Հատուկ</b> թանաք</p> | <p>Միայն ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելու համար:</p>                                                                                                                                                                                                                                                                         |
| <p>ՏԸՀ անդամի անհատական կնիքը</p>  | <p>Քվեարկության նախորդ օրը, վիճակահանությանը տրամադրվում է ՏԸՀ բոլոր անդամներին:</p>                                                         | <p>քվեարկության օրը անընդհատ գտնվում է ՏԸՀ անդամի մոտ, ՏԸՀ այլ անդամի չի փոխանցվում:</p>                               | <p>Սովորական թանաք</p>     | <p>1. Քվեարկության նախորդ օրը <b>ցանկության դեպքում</b> քվեաթերթիկների և ընտրողների ցուցկների էջերի հակառակ կողմը կնքելու համար:</p> <p>2. Քվեարկության օրը <b>պարտադիր</b> ընտրողների ցուցակում ընտրողի տվյալները գրանցելուց հետո՝ հանձնաժողովի գրանցման համար պատասխանատու անդամի <b>անհատական կնիքի համար նախատեսված սյունակում:</b></p> |



# ՀԱՎԵԼՎԱԾ 4

Քվեաթերթիկները և ընտրողների ցուցակները ստորագրելու համար անցկացվող վիճակահանության թերթիկներ:


|                                                                                     |                                                                                     |                                                                                       |
|-------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------|
| Երևանի ավագանու ընտրություններ                                                      | Երևանի ավագանու ընտրություններ                                                      |    |
| Երևանի ավագանու ընտրություններ                                                      |                                                                                     |    |
|                                                                                     |                                                                                     |  |
|                                                                                     |                                                                                     |  |
|                                                                                     |                                                                                     |  |
|  |  |  |





## ՀԱՎԵԼՎԱԾ 5

Քվեարկության օրը վիճակահանությամբ գործառույթների բաշխման համար նախատեսված թերթիկներ, եթե ընտրական տեղամասում ընտրողների թիվը 1000-ից ավելի է:





## ՀԱՎԵԼՎԱԾ 6

Քվեարկության օրը վիճակահանությամբ գործառույթների բաշխման համար նախատեսված թերթիկներ, եթե ընտրական տեղամասում ընտրողների թիվը 1000-ից պակաս է:

|                |  |
|----------------|--|
| ցուցակ - 1     |  |
| քվեաթերթիկ - 1 |  |
| քվեատուփ       |  |

